ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

7 հունիսի չորեքշաբթի 2023
տպագրության ԺԲ տարի

81
(2747)

100 դրամ

քաղ. Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

ՀԱՊԿ-ԻՑ ԴԺԳՈՂՈՒՀԸ ԳՆՈՒՄ Է ՀԱՊԿ ՆԻՍՏԻՆ ՄԱՄՆԱԿՑԵԼՈՒ

ՀԱՊԿ-ից մշտապես դժգոհող ու ՀԱՊԿ-ին քննադատող Ախ քարտուղար Արմեն Գրիգորյանն այսօր մասնակցելու է ՀԱՊԿ Ախ քարտուղարների նիստին:

«Ժողովուրդ» օրաթերթը կառավարությունից տեղեկացավ, որ նիստին մասնակցելու նպատակով Ախ քարտուղարը հունիսի 7-8-ը գործուղվելու է Բելառուս՝ Նիկոլ Փաշինյանի որոշմամբ:

Հատկանշական է, որ Արմեն Գրիգորյանը թերեւս իշխանության ամենահակառուսական ներկայացուցիչն է համարվում, նա մշտապես բավականին կոշտ քննադատություններ է անում ՀԱՊԿ-ի հասցեին, մինչեւ անգամ ՀԱՊԿ-ից դուրս գալու կոչեր է պարբերաբար անում:

Արմեն Գրիգորյանն էր թերեւս այն թեզի հեղինակը, թե ՌԴ-ն ճնշում է Հայաստանին Ռուսաստան-Բելառուս միութենական դաշինքին անդամակցելու համար: Հետո, իհարկե, Նիկոլ Փաշինյանն ասաց, թե փորձագիտական մակարդակով են քննարկում, ճնշում չկա:



Ազգային ժողովում կան պատգամավորներ, որոնք «վոյաժների» մեծ սիրահար են եւ առիթը բաց չեն թողնում այս կամ այն միջոցառման անվան տակ արտերկիր մեկնել: Այս անգամ խոսքը «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության պատգամավոր Ծովինար Վարդանյանի մասին է: Նա որոշել է հունիս ամիսը նվիրել շրջագայությունների: Այս օրերին ՔՊ-ական պատգամավորն արդեն Վաշինգտոնում է: ԱԺ նախագահի որոշումից «Ժողովուրդ» օրաթերթը տեղեկանում է, որ նա մեկնել է ԱՄՆ՝ Կանանց, խաղաղության եւ անվտանգության ազգային համակարգողների ցանցի բարձր մակարդակի հինգերորդ հանդիպմանը մասնակցելու համար հունիսի 5-10-ը: Ընդ որում՝ միայն գիշերակացն է հրավիրող կողմի հաշվին: Այդ նույն որոշման մեջ նշվում է, որ մյուս ծախսերը կարվեն պետբյուջեի հաշվին: Արդեն Երեւան վերադառնալուց օրեր անց Վարդանյանը մեկնելու է Վիեննա՝ «ԵՄ-ն հանուն գենդերային հավասարության բարեփոխումների օգնության պատուհան» ծրագրի՝ գենդերային բյուջետավորման թեմայի վերաբերյալ ուսուցողական այցին մասնակցելու համար հունիսի 19-23-ը. այստեղ բոլոր ծախսերը հոգալու է հրավիրող կողմը:



Ամառը խորհրդարանում թեժ է լինելու: Հաջորդ շաբաթ մեկնարկում են ԱԺ հերթական նիստերը, իսկ ամռանը արտահերթ նիստեր կլինեն, քանի որ շատ նախագծեր կան, որոնք օդում են մնացել, դեռ չեն քննարկվել, ուստի, հերթական նիստերից բացի, ԱԺ արտահերթ նիստեր կգումարվեն, որպեսզի նախագծերը քվեարկվեն: «Ժողովուրդ» օրաթերթի ՔՊ-ական աղբյուրները փոխանցեցին, որ պատգամավորներին հրահանգ է իջեցվել մինչեւ ԱԺ պաշտոնական արձակուրդը՝ հուլիսի 15, գուցե նաեւ մինչեւ օգոստոսի 1-ը երկրից երկար ժամանակով չբացակայել, արձակուրդի ծրագրեր չկազմել: Արտահերթ նիստերի ավարտից հետո նոր պատգամավորները կարող են հանգստի մասին մտածել: Ընդ որում՝ ՔՊ-ականներին ասվել է, որ ամռանը եւս քաղաքական դաշտն ակտիվ պետք է պահել, նոր նախագծեր հեղինակել, տարբեր թեմաներով քննարկումներ կազմակերպել: Թե որն է սրա նպատակը, ՔՊ-ականների համար եւս անհասկանալի է, բայց «հրահանգ է» եկել, պետք է կատարեն: Գուցե պատճառը Երեւանի ավագանու ընտրություններն են:

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկությունների համաձայն՝ իրավապահները Փարաքարի գյուղապետի մասնակցությամբ տեղի ունեցած միջադեպի գործի վրա փորձում են աչք փակել ու կարճել այն: Քաղաքական իշխանությունները իրավապահներին հասկացրել են, որ համայնքի ղեկավարն իրենց «սրտի պաշտոնյան» է, ու պետք է թեման փակել: «Ժողովուրդ» օրաթերթը այս առիթով դիմեց ՀՀ քննչական կոմիտե՝ հասկանալու համար, թե ինչ ընթացք ստացավ համայնքի ղեկավարի մասնակցությամբ գրանցված միջադեպը, ինչին ի պատասխան՝ Կոմիտեի լրատվականից հայտնեցին. «Փարաքարի գործով երկու անձի նկատմամբ քրեական հետապնդում է հարուցված՝ ՀՀ քրեական օրենսգրքի 297-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով: Նրանց նկատմամբ խափանման միջոց է ընտրված բացակայելու արգելքը: Այս պահին նախաքննությունը շարունակվում է»: Նշենք, որ մեղադրյալներից մեկը հենց Փարաքար խոշորացված համայնքի ղեկավարն է, որի նկատմամբ քրեական հետապնդում է հարուցվել, ու երկրից բացակայելու արգելք դրվել: Հիշեցնենք, որ այս տարվա ապրիլի 24-ին Armlur.am-ը գրել էր, որ Փարաքար գյուղից հասած տեղեկությունների համաձայն՝ ուշ գիշերին Թահրով գյուղում գործող «Կալիֆորնիա» գիշերային ակումբում թեժ կռիվ է եղել: Փարաքար խոշորացված համայնքի ղեկավար Դավիթ Մինասյանը եւ Գոռ անունով եւս մի անձ, իրենց ընկերների հետ միասին գտնվելով ոգելից խմիչքի ազդեցության տակ, անհարկի վիճաբանել են նշված ակումբում գտնվող անձանց հետ, հնչեցրել սեռական բնույթի հայհոյանքներ, բացահայտ անհարգալից վերաբերմունք դրսեւորել հաճախորդների, նշված ակումբի աշխատակիցների նկատմամբ, բռնություն գործադրել հաճախորդների նկատմամբ եւ ապակյա բաժակներով հարվածել պատերին, կոտրել ակումբի ապակիները, այնուհետեւ նույն վարքագիծը դրսեւորել ակումբից դուրս՝ ճանապարհի երթեւեկելի հատվածում, խափանել են ավտոմեքենաների բնականոն երթեւեկությունը: Ու սա ներվում է Նիկոլ Փաշինյանի իշխանության կողմից:

ՀԱՅՑ

ԸՆԴԴԵՄ՝ ՔՊ–ԱԿԱՆՆԵՐԻ

Սահմանադրական դատարանի աշխատակազմի նախկին ղեկավար Էդգար Ղազարյանն ապրիլի 4-ին ԱԺ մարդու իրավունքների եւ հանրային հարցերի մշտական ժողովի արտահերթ նիստում ՔՊ-ական պատգամավորների պահվածքի մասով հայց էր ներկայացրել դատարան:

Հիշեցնենք, որ այդ օրը՝ նիստի ժամանակ, ՔՊ-ականները ագրեսիվ պահվածք էին ցուցաբերում, մասնավորապես՝ ՔՊ խմբակցության քարտուղար Արթուր Հովհաննիսյանը սպառնում էր Էդգար Ղազարյանին «կտրել ականջն ու լեզուն»:

«Ժողովուրդ» օրաթերթի հետ զրույցում Ղազարյանը նշեց, որ ՔԿ-ն հրաժարվել է վարույթ հարուցել ՔՊ-ականների վարքագծի մասով:

-Ես դեռ պաշոնապես չեմ ստացել դատարանի որոշումը, բայց Datalex-ում տեղադրված է, որ դատարանը հրաժարվել է էդ գործը վարույթ ընդունել, այսինքն՝ ԱԺ-ի որոշումը բողոքարկելու մեր հայցադիմումը հրաժարվել է վարույթ ընդունել: Նայեք՝ ինչ հետաքրքիր բան է ստացվել.

Առաջինը՝ ում որ մակագրվել է, էդ դատավորը յոթօրյա ժամկետում դա պետք է աներ, յոթերորդ օրը նոր իմացել է, որ պիտի իմ ենթակայության տակ ու Անահիտ Մանասյանի հետ աշխատի: Այսինքն՝ առաջին օրը չի իմացել, որ ինքնաբացարկ հայտարարի, պահել է, վերջին օրով է կայացրել:

Ինքնաբացարկից հետո գործը մակագրվել է ուրիշ դատավորի, որը, պարզվում է, հետաքրքիր զուգադիպությամբ ծնվել է Տավուշի մարզի Իջեւան քաղաքում, դատավորի պաշտոնը ստանձնել է ադրբեջանաթուրքական հեղափոխությունից հետո , ու ինքն էլ որոշում է կայացրել, որ գործը պիտի վարույթ չընդունի այնպիսի պրիմիտիվ մեկնաբանություններով, որ ոչ մի իրավաբանի պատիվ չէր բերի էդ ամեն ինչը գրելուց հետո գործի վարույթը մերժել:

Ասում է ԱԺ՝ներկայացուցչական մարմնի կայացված որոշումները դատարանում չեն կարող քննարկման առարկա դառնալ:

Այսինքն՝ ըստ էդ դատավորի փառահեղ կարծիքի՝ Ազգային ժողովը ցանկացած ապօրինություն կարող է անել, ցանկացած օրենք, սահմանադրություն կարող է խախտել, եւ եթե դրանով խախտվում է կոնկրետ գործընթացի մասնակցի իրավունքները, դա չի կարող երբեւէ դատարանում քննարկվել:

Այսինքն՝ նման պրիմիտիվ մեկնաբանություն ես, անկեղծ ասած, որեւէ տեղից չէի լսել: Բնականաբար, մենք դա բողոքարկելու ենք եւ հետեւողականություն ենք ցուցաբերելու, բայց դրա հետ կապված ես նաեւ դիմել էի դատախազություն, որպեսզի քրեական գործ հարուցեն ԱԺ ՔՊ խմբակցության մի շարք պատգամավորների վրա, այսինքն՝ մեկ կամ մի քանի պատգամավոր չէր, այլ կոնկրետ հանցախումբ էր գործել, ընդ որում՝ Քրեական օրենսգրքի 4 հոդվածներով ենթադրյալ հանցագործությունների կոնկրետ փաստով, որը ուղիղ եթերով տեսանելի է եղել ողջ հասարակության առաջ: Քննչական կոնիտեն հրաժարվել է վարույթ հարուցել, հիմա դա էլ բողոքարկել ենք դատախազություն. ոչ մի պատասխան չկա:

Այսինքն՝ որոշումների հետ կապված ժամկետներ չկան: Ես նաեւ քաղաքացիական հայցով դիմել եմ Արարատ եւ Վայոց ձորի մարզերի քաղաքացիական դատարաններ եւ Երեւան քաղաքի քաղաքացիական դատարան Արթուր Հովհաննիսյանի եւ Ռուստամ Բաքոյանի՝ արժանապատվությունը վիրավորելու եւ զրպարտության հետ կապված ներողություն խնդրելու եւ ֆինանսական փոխհատուցման հարցով: Դրանք դատարանը հետ է ուղարկել, ասում է, որ պետք է սահմանված տուրքի չափը մուծել, չնայած որ մենք միջնորդություն ենք ներկայացրել, որ ես այս պահին աշխատանք չունեմ: Փաստաթղթեր էի ներկայացրել դրա վերաբերյալ՝ խնդրելով, որ տուրքի հարցը դատարանում քննարկի դատաքննության վերջում, բայց դատարանը հետ է վերադարձրել, որպեսզի ես էդ հնարավորությունից զրկվեմ:

Ես հիմա դիմել եմ իմ ընկերների աջակցությանը եւ հիմա էլ եմ դիմում. եթե կլինեն մարդիկ, ովքեր էդ հարցով ինձ կօգնեն, շնորհակալ կլինեմ, որ օգնեն՝ 600,000 դրամ պետական տուրքը վճարվի, որպեսզի էդ երկու պատգամավորները հետագայում ամեն մեկը 9,000,000 դրամ ինձ վճարեն, եւ ես կվերադարձնեմ ինձ օգնած մարդկանց գումարները:

ՔՐԻՍՏԻՆԱ ՄՈՒՇԵՂՅԱՆ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԵՏԱՊՆԴՈՒՄՆԵՐ

ՓՈՂԵՐԻ ԼՎԱՑՈՒՄՆ ՈՒ ԱՌԵՎԱՆԳՈՒՄԸ

Արդեն տեւական ժամանակ է՝ անցանկալի անձանց կալանավորումը իշխանությունների համար դարձել է սովորական երեւույթ, եւ վերջիններս այդպիսով շատ հաճախ «պատժում են» նրանց, ովքեր չեն կիսում իրենց կարծիքն ու գաղափարները: Այլ կերպ ասած, քաղաքական հետապնդումները այս իշխանության օրոք հասել են իրենց պատմական պիկին:

Երեկ «Ժողովուրդ» օրաթերթը տեղեկացրել էր, որ Վերաքննիչ քրեական դատարանը որոշում է կայացրել բավարարել Աշոտ Փաշինյանի առեւանգման գործով մեղադրյալ Գայանե Հակոբյանի կալանքը տնային կալանքով փոխարինելու միջնորդությունը: Դատարանը որոշեց փոխել Գայանե Հակոբյանի խափանման միջոցը, բավարարել հանրային մեղադրողի միջնորդությունը եւ կալանավորել նրան 1 ամիս, 15 օր ժամկետով:

Այս ամենին զուգահեռ, ավելի վաղ Հակակոռուպցիոն դատարանում քննվող նախկին ոստիկանապետ Վլադիմիր Գասպարյանի թիկնազորի նախկին պետ Արշակ Հակոբյանի (Վովայի Արշակ) գործը, որը առանձնապես խոշոր չափերով գույքի չհայտարարագրմանը, ինչպես նաեւ հանցավոր ճանապարհով ստացված առանձնապես խոշոր չափերով գույքը՝22.007.259 ՀՀ դրամի օրինականացման մեղադրանք էր, նույնպես խափանման միջոց է նշանակվում տնային կալանքը: Նրա հանդեպ խափանման միջոցը փոխվեց տնային կալանքով՝ համակցված բացակայելու արգելքով՝ 3 ամիս ժամկետով:

Այսինքն՝ Արշակ Հակոբյանի՝ այսպիսի խոշոր չափի փողերի լվացման գործը հավասարեցվում է Գայանե Հակոբյանի գործին՝ երկու դեպքում էլ ընտրելով նույն խափանման միջոցը:

ՄԱՇԱ ՄԵԼՔՈՆՅԱՆ

ՍԵՆՅԱԿՆԵՐԸ ՀՄԿՈՂՈՒԹՅԱՆ ՏԱԿ ԵՆ ԵՂԵԼ

Ինչո՞ւ են պաշտոնից ազատվել ՀՀ երկրորդ եւ երրորդ նախագահներ Ռոբերտ Քոչարյանի ու Սերժ Սարգսյանի քրեական գործերը հսկող դատախազները: «Ժողովուրդ» օրաթերթին դատախազության համակարգից լուրեր հասան առ այն, որ դատախազների սենյակները օպերատիվ հսկողության տակ են եղել, ինչի արդյունքում, ըստ համակարգում տարածված լուրերի, դատախազները, անգամ իմանալով այդ մասին, կարծիք են հայտնել՝ «ջանդամ իրենց չեն լսում», ու գլխավոր դատախազ Աննա Վարդապետյանի մասին վիրավորական արտահայտություններով խոսակցություններ են ունեցել, ինչն էլ դարձել է նրանց՝ համակարգից ազատման պատճառ: Թե որքանով են համակարգում տարածված այս խոսակցությունները իրական, ցույց կտա ժամանակը, սակայն երեկվանից համակարգում ակտիվ խոսում են այս մասին:

Հիշեցնենք, որ երեկ հայտնի դարձավ, որ աշխատանքից ազատման դիմում են ներկայացրել գլխավոր դատախազի տեղակալ Գեւորգ Բաղդասարյանը եւ Կոտայքի մարզի դատախազ Պետրոս Պետրոսյանը, որոնք Ռոբերտ Քոչարյանի՝ «Մարտի 1»-ի գործով մեղադրողներն էին:

Բացի այդ, աշխատանքից ազատման դիմում է գրել նաեւ Սերժ Սարգսյանի գործով դատախազ Արսեն Մարտիրոսյանը:

ՀԱՍՏԻՔՆԵՐԸ ԹԱՓՈՒՐ ԵՆ ԹՈՂԵԼ

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարար Ժաննա Անդրեասյանն ունի 5 տեղակալ, սակայն պաշտոնական կայքում առկա տվյալների համաձայն՝ պետք է լինի եւս մեկ տեղակալ, որի հաստիքը, սակայն, թափուր է: Միեւնույն ժամանակ, թափուր է նաեւ Բարձրագույն եւ հետբուհական մասնագիտական կրթության վարչության պետի տեղակալի պաշտոնը: Հայաստանի ամենաերկար անունն ունեցող նախարարությունում այլ թափուր հաստիքներ էլ կան. պետ չունի Մասնագիտական կրթության եւ ուսուցման քաղաքականության մշակման եւ ռազմավարության բաժինը, ինչպես նաեւ ամենակարեւոր վարչություններ մեկը՝ Հանրակրթության վարչությունը:

«Ժողովուրդ» օրաթերթը տեղեկացավ՝ Իրավաբանական վարչությունում էլ թափուր են փաստաթղթերի ուսումնասիրման եւ դատական գործերի բաժնի պետի եւ օրենսդրության բաժնի պետի հաստիքները: Եվ ամենակարեւորը՝ նախարարությունը չունի նաեւ մամուլի քարտուղար: Օրուգիշեր թափանցիկ կառավարման մասին խոսող Նիկոլ Փաշինյանի իշխանությունը հանրության հետ շփման մասնագետների անգամ չի նշանակում:

ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԻ ԲԱՇԽՈՒՄ

«Գործակարգավարական նիստերի անցկացման ֆորմատը քաղաքապետարանի ներքին որոշումն է, մենք այնպես ենք աշխատանքը բաշխել, որ մեզ հարմար լինի»,- հունիսի 6-ին ԱԺ-ում լրագրողների հետ զրույցում նշեց Երեւանի քաղաքապետի պաշտոնակատար Լեւոն Հովհաննիսյանը՝ պատասխանելով հարցին, թե ինչպես է, որ քաղաքապետարանում գործակարգավարական նիստերը վարում է Տիգրան Ավինյանը, իսկ, այ, բյուջեն ներկայացնելու համար եկել է ինքը:

Հարցին՝ այդ ոնց են աշխատանքը բաժանել, որ բոլոր PR-վելու գործերը բաժին են հասել Տիգրան Ավինյանին. ժապավեն կտրելիս ինքն է, բացումներ անելիս ինքն է, կառավարության նիստերին ինքն է, Լեւոն Հովհաննիսյանը պատասխանեց. «Պարոն Ավինյանը 2018-2022 թվականներին եղել է փոխվարչապետ. սա նշանակում է, որ նա շատ լավ տիրապետում է կառավարության աշխատանքը, մասնավորապես՝ նաեւ ֆինանսական ոլորտի հետ կապված: Մենք կառավարություն դիմել ենք տարբեր հարցերով, եւ այդ աշխատանքը պարոն Ավինյանը կարող է անել շատ արդյունավետ, նա այդ աշխատանքն արել է շատ արդյունավետ, կան հստակ արդյունքներ արդեն: Մենք նպատակահարմար ենք գտնում, որ հենց ինքը ներկա լինի կառավարության նիստերին»:

Դիտարկմանը, որ կանոնակարգը պահանջում է, որ կառավարության նիստերին ներկա լինի Երեւանի քաղաքապետը, ոչ թե փոխքաղաքապետը, Հովհաննիսյանը խուսափեց արձագանքել:

Հարցին, թե արդյոք քարոզարշավ չէ, որ Երեւանի ընտրություններից մի քանի ամիս առաջ Տիգրան Ավինյանը մասնակցում է միջոցառումների, մանկապարտեզներ, խաղահրապարակներ, այլ ենթակառուցվածքներ է բացում, քաղաքապետի պաշտոնակատարը պատասխանեց. «Ոչ, ես դա չեմ համարում քարոզարշավ, համարում եմ ընթացիկ աշխատանք: Այդ տրամաբանությամբ ստացվում է, որ յուրաքանչյուր քաղաքական թիմ, որը տվյալ պահին այդ համայնքում ղեկավարում է, պարզապես ընտրություններից մեկ տարի առաջ գործ չանի:

Այն ոլորտները, որտեղ պարոն Ավինյանն է ղեկավարում, մասնավորապես՝ շինարարության, ինքն էլ ներկա է լինում բացմանը, ինչը շատ նորմալ է»:

Նշենք, որ Երեւանի ավագանու ընտրությունները տեղի են ունենալու սեպտեմբերի 17-ին: Իշխող ՔՊ-ն հայտարարել է, որ քաղաքապետի իրենց թեկնածուն Տիգրան Ավինյանն է:

ԽԱԽՏՈՒՄՆԵՐ

ՀԱՄԱՅՆՔԱՊԱՏԿԱՆ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶՆԵՐՆ ՕՏԱՐՎԵՅԻՆ

Ի կատարումն ՀՀ գլխավոր դատախազի հանձնարարության՝ Արաբկիր եւ Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների դատախազությունում ֆնության առարկա են դարձել համայնքին սեփականության իրավունքով փոխանցված մանկապարտեզների օտարման գործընթացները:

Նկատի ունենալով, որ համայնքին սեփականության իրավունքով փոխանցված ուսումնական հաստատությունը (նախակրթական հաստատությունը) օտարվելու դեպքում չի կարող օգտագործվել այլ նպատակներով (քրեական վարույթների ուսումնասիրությամբ պարզվել է, որ մի շարք մանկապարտեզներ օտարվել են որպես ոչ բնակելի տարածքներ, իսկ որոշ դեպքերում՝ ներառվել բնակելի ֆոնդում)՝ Երեւան քաղաքի Արաբկիր եւ Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների դատախազությունը 2023 թվականի հունիսի 5-ին Վարչական դատարան է ներկայացրել 5 հայց՝ Արաբկիր եւ Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջաններում գործած մանկապարտեզների տարածքներն օտարելու վերաբերյալ համայնքի ավագանու եւ համայնքի ղեկավարի համապատասխան որոշումներն անվավեր ճանաչելու պահանջի մասին:

Մասնավորապես՝ Դատախազությունը Վարչական դատարանում վիճարկում է.

1. Երեւան քաղաքի Քանաքեռ-Զեյթուն համայնքի Դ. Անհաղթ փողոցի 5 հասցեում գտնվող 141.5 քմ մակերեսով շինության օտարումը (նախկին 147 մսուր-մանկապարտեզ), իսկ որպես հետեւանք՝ վերոնշյալ տարածքի նկատմամբ «Ն» ՍՊ ընկերության սեփականության իրավունքի գրանցումը:

2. Երեւան քաղաքի Քանաքեռ-Զեյթուն համայնքի Դրոյի փողոց 21 ա շենքի 1-ին հարկում գտնվող 126.9 քմ մակերեսով շինության օտարումը (նախկին 199 մսուր-մանկապարտեզ), իսկ որպես հետեւանք՝ վերոնշյալ տարածքի նկատմամբ Ա.Զ.-ի սեփականության իրավունքի գրանցումը:

3. Երեւան քաղաքի Քանաքեռ-Զեյթուն համայնքի Հր.Ներսիսյան փողոցի 1 շենքում գտնվող 121.2 քմ մակերեսով շինության օտարումը (նախկին թիվ 132 մանկապարտեզ), իսկ որպես հետեւանք՝ վերոնշյալ տարածքի նկատմամբ Ա.Գ.-ի, Ն.Ս.-ի եւ Ա.Հ.-ի սեփականության իրավունքի գրանցումը:

4. Երեւան քաղաքի Քանաքեռ-Զեյթուն համայնքի Հր.Ներսիսյան փողոցի թիվ 1 շենքում գտնվող 83.9 քմ մակերեսով շինության օտարումը (նախկին թիվ 132 մանկապարտեզ), իսկ որպես հետեւանք՝ վերոնշյալ տարածքի նկատմամբ Է.Վ.-ի սեփականության իրավունքի գրանցումը:

5. Երեւան քաղաքի Քանաքեռ-Զեյթուն համայնքի Զ. Քանաքեռցու փողոցի թիվ 32 հասցեում գտնվող 2575,5 քմ մակերեսով շինության օտարումը (նախկին 159 մանկապարտեզ), իսկ որպես հետեւանք՝ վերոնշյալ տարածքի նկատմամբ Ս.Ս.-ի եւ Ա.Ե.-ի սեփականության իրավունքի գրանցումը:

Վարչական շրջանների դատախազությունը հայցեր է ներկայացրել նաեւ քրեական երկու վարույթի նյութերով:

Մասնավորապես՝ Դատախազությունը Վարչական դատարանում վիճարկում է.

1. Երեւան քաղաքի Դավիթ Անհաղթ փողոց 8 հասցեում գտնվող, 23153,65 քմ մակերեսով տարածքը «Երեւանի տեխնոլոգիական սարքավորումների գործարան» ԲԲ ընկերության սեփականության իրավունքի պետական գրանցումն անվավեր ճանաչելու վերաբերյալ որոշումը:

2. Երեւան քաղաքի Զ. Քանաքեռցու փողոցի 50 հասցեում գտնվող 2370 քմ մակերեսով տարածքը «Խաչարամ կոնսերվատորիա» ՍՊԸ-ին օտարելու վերաբերյալ որոշումը:

ՕՐՎԱ ԽՃԱՆԿԱՐ

ԱՄՆ-Ն՝ ԲԱՆԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍՊԱՍՈՒՄՈՎ

ԱՄՆ-ն ուրախ է, որ Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ բանակցությունները շարունակվում են, եւ սպասում է Վաշինգտոնում կողմերին դարձյալ հյուրընկալելուն: Այս մասին հայտնել է ԱՄՆ պետքարտուղարության խոսնակի առաջին տեղակալ Վեդանտ Պատելը՝ անդրադառնալով այս ամիս Վաշինգտոնում նախատեսված բանակցություններին:

«Մենք անհամբերությամբ սպասում ենք բանակցությունների հերթական փուլը հյուրընկալելուն, քանի որ կողմերը շարունակում են հետամուտ լինել Հարավային Կովկասի տարածաշրջանում խաղաղ ապագայի: Ինչպես նախկինում ասել եմ, ուղիղ երկխոսությունն առանցքային է խնդիրների լուծման եւ տեւական ու արժանապատիվ խաղաղության հասնելու համար: ԱՄՆ-ն գոհ է, որ Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ բանակցություններն ընթանում են տարբեր հարթակներում, այդ թվում նաեւ՝ ղեկավարների վերջին հանդիպումը»,- ասել է Պատելը:

Հայաստանի եւ Ադրբեջանի արտաքին գործերի նախարարներ Արարատ Միրզոյանն ու Ջեյհուն Բայրամովը բանակցությունների հերթական փուլի շրջանակներում կհանդիպեն Վաշինգտոնում: Քննարկումների կմեկնարկեն հունիսի 12-ին:

ՀԵՌԱԽՈՍԱԶՐՈՒՅՑ՝ ԱԳՆ-Ի ՀԵՏ

Հունիսի 6-ին ՀՀ ԱԳ նախարար Արարատ Միրզոյանը հեռախոսազրույց է ունեցել Ավստրիայի եվրոպական եւ արտաքին գործերի դաշնային նախարար Ալեքսանդր Շալենբերգի հետ, որի ժամանակ զրուցակիցներն անդրադարձ են կատարել երկկողմ համագործակցության օրակարգին, ինչպես նաեւ բազմակողմ հարթակներում փոխշահավետ փոխգործակցության հարցերին:

ԱԳՆ-ից հայտնում են, որ նրանք մտքեր են փոխանակել նաեւ ՀՀ-ԵՄ գործընկերությանն առնչվող հարցերի շուրջ:

Հեռախոսազրույցի ընթացքում քննարկվել են տարածաշրջանային կայունությանն ու անվտանգությանն առնչվող հարցեր:

ՀՀ ԱԳ նախարարն ավստրիացի գործընկերոջն է ներկայացրել Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ հարաբերությունների կարգավորման գործընթացի վերջին զարգացումները: Նախարար Միրզոյանը շեշտել է բանակցություններում առանցքային հարցերի, մասնավորապես՝ տարածքային ամբողջականության փոխադարձ ճանաչման հստակ արտահայտված հանձնառության հիման վրա սահմանազատման, Լեռնային Ղարաբաղի ժողովրդի իրավունքների ու անվտանգության հարցերի հասցեագրման վերաբերյալ հայկական կողմի դիրքորոշումը:

Ընդգծվել է առկա, այդ թվում՝ մարդասիրական խնդիրների, Լաչինի միջանցքի արգելափակման խնդրի հասցեագրման եւ ԼՂ հիմնախնդրի համապարփակ կարգավորման անհրաժեշտությունը:

ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՄԵՑՎԵՑ

ՀՀ սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի ղեկավարի որոշմամբ՝ վերացվել է Արտաշատի թիվ 4 մսուր-մանկապարտեզի խոհանոցի գործունեության կասեցումը (ՀՀ Արարատի մարզ, ք. Արտաշատ):

ՍԱՏՄ Արարատի մարզային կենտրոնի տեսուչների կրկնակի ստուգման ընթացքում մանկապարտեզում առկա սննդամթերքի նմուշներն ուղարկվել են լաբորատոր փորձաքննության, անհամապատասխանություններ չեն հայտնաբերվել: Չեն հայտնաբերվել նաեւ սանիտարահիգիենիկ նորմերի խախտումներ:

ՆԱԽԱՔՆՆՈՒԹՅՈՒՆ

ԹՇՆԱՄԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

2023թ. հունիսի 3-ին՝ ժամը 23:35-ին, Մարտունու բժշկական կենտրոնից ահազանգ է ստացվել այն մասին, որ հրազենային վիրավորումով իրենց մոտ բուժօգնության է տեղափոխվել 1979թ. ծնված մի քաղաքացի:

2023թ. հունիսի 4-ին ՀՀ Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի Գեղհովիտ բնակավայրի բնակիչ Ա.Պ.-ն Ոստիկանության Մարտունու բաժնում հաղորդում է տվել այն մասին, որ նախօրեին իր կողմից պատրաստված ինքնաշեն զենքով սպանելու նպատակով կրակել է համագյուղացի Կ.Պ.-ի ուղղությամբ, դեպքի վայրում թողել ինքնաշեն զենքը եւ հեռացել:

ՀՀ քննչական կոմիտեի Գեղարքունիքի մարզային քննչական վարչության Մարտունու քննչական բաժնում, ՀՀ քրեական օրենսգրքի 44-155-րդ հոդվածի 1-ին մասի, ինչպես նաեւ ՀՀ քրեական օրենսգրքի 335-րդ հոդվածի 1-ին եւ 336-րդ հոդվածի 1-ին մասի հատկանիշներով, նախաձեռնվել է երկու քրեական վարույթ, որոնք միացվել են:

Ա.Պ.-ն ներկայացվել է քննչական մարմնին եւ հանցանք կատարած լինելու անմիջականորեն ծագած հիմնավոր կասկածի հիմքով ձերբակալվել:

Հրազենային վնասվածք ստացած անձը ճանաչվել է տուժող, զննվել է դեպքի վայրը, որտեղից հայտնաբերվել ու վերցվել է ինքնաշեն եղանակով պատրաստված հրազենի նմանվող զենքը, նշանակվել են փորձաքննություններ:

Քննությամբ ստացված փաստական տվյալների համաձայն՝ ազգականներ համարվող Ա.Պ.-ն եւ Կ.Պ.-ն տեւական ժամանակ անձնական հարցերի պատճառով ունեցել են թշնամական հարաբերություններ: Կ.Պ.-ին սպանելու նպատակով Ա.Պ.-ն իր տանը պատրաստել է ինքնաշեն՝ 12 մմ տրամաչափի որսորդական փամփուշտ կրակելուն հարմարեցված, մահակի մեջ քողարկված ատիպիկ հրազեն:

2023թ? հունիսի 3-ին՝ ժամը 22:30-ի սահմաններում, վերցնելով ինքնաշեն հրազենը՝ ուղեւորվել է նրանց տուն: Գյուղամիջյան ճանապարհին գտնվող խանութի մոտ տեսելով Կ.Պ.-ի ավտոմեքենան եւ հասկանալով, որ վերջինս խանութում է՝ներս է մտել, Կ.Պ.-ին կանչել խանութի կողային հատվածում գտնվող սենյակ, ապա ինքնաշեն այդ հրազենով Կ.Պ.-ին ապօրինաբար կյանքից զրկելու դիտավորությամբ մեկ անգամ կրակել է վերջինիս ձախ ուսային հատվածին: Կարծելով, թե Կ.Պ.-ն մահացել է, նա հրազենը թողել է դեպքի վայրում եւ հեռացել: Կ.Պ.-ն, հրազենային վիրավորումով, սուր արյունահոսությամբ տեղափոխվել է Մարտունու բժշկական կենտրոն, որտեղ հաջողվել է փրկել նրա կյանքը:

Քննությամբ ձեռք բերված փաստերի հիման վրա՝ Ա.Պ.-ի նկատմամբ հարուցվել է հանրային քրեական հետապնդում, եւ նրան մեղադրանք է ներկայացվել՝ ՀՀ քրեական օրենսգրքի 336-րդ հոդվածի 1-ին մասով, 335-րդ հոդվածի 1-ին մասով եւ 44-155-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցավոր արարքներ կատարելու համար:

Միջնորդություն է ներկայացվել դատարան՝ նրա նկատմամբ կալանքը որպես խափանման միջոց ընտրելու վերաբերյալ:

Նախաքննությունը շարունակվում է:

Ծանուցում. հանցանքի համար մեղադրվողը համարվում է անմեղ, քանի դեռ նրա մեղավորությունն ապացուցված չէ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով՝ դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատավճռով:

ԼՈՒՐԵՐ

ԽՈՒԼԻԳԱՆՈՒԹՅՈՒՆ՝ ՊՈՒՐԱԿՈՒՄ

ՆԳՆ ոստիկանության ՊԾ Երեւանի գնդի 3-րդ գումարտակի ծառայողները հունիսի 5-ին՝ ժամը 19.50-ին, Մարտիրոս Սարյանի պուրակում հայտնաբերել, խուլիգանություն կատարելու հիմնավոր կասկածանքով ձերբակալել եւ Կենտրոնական բաժին են տեղափոխել երեք տղամարդու, նաեւ բաժին են հարավիրել մեկ տղամարդու:

Այս մասին հայտնում են ոստիկանությունից:

Նրանք նշված պուրակում, խախտելով հասարակական կարգը, քաշքշել են իրար եւ հնչեցրել հայհոյանքներ: Անձնական խուզարկությամբ տղամարդկանցից մեկի մոտ հայտնաբերվել է 8,8 սմ շեղբի երկարությամբ ծալովի դանակ:

Կազմված փաստաթղթերն ուղարկվել են նախաքննական մարմին:

Ծանուցում. ենթադրյալ հանցանքի մեջ կասկածվողը կամ մեղադրվողը համարվում է անմեղ, քանի դեռ նրա մեղավորությունն ապացուցված չէ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով՝ դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատավճռով:

ԳՈՂՈՒԹՅՈՒՆ՝ ՏԱՆՏԻՐՈՔԻՑ

Ոստիկանության Կոտայքի բաժնի համայնքային ոստիկանները տեղեկություն էին ստացել, որ Աբովյան քաղաքի հանրակացարաններից մեկի 23-ամյա բնակիչը ապօրինաբար մուտք է գործել հարեւանի բնակարան եւ գողացել տանտիրուհու բանկային քարտը:

Ոստիկանությունից հայտնում են, որ ստացված տեղեկության համաձայն՝ երիտասարդը Աբովյանի Հատիսի փողոցի բանկոմատից կանխիկացրել էր 50 000 դրամ, ապա վերադարձել հանրակացարան եւ հարեւանուհու բնակարանում թողնելով քարտը՝ աննկատ հեռացել էր:

Աբովյանի քննչական բաժնում նախաձեռնվեց քրեական վարույթ:

Հունիսի 2-ին երիտասարդը ձերբակալվեց եւ տեղափոխվեց Կոտայքի բաժին, որտեղ չժխտեց արարքը:

Երիտասարդն ու կազմված փաստաթղթերը ներկայացվել են Աբովյանի քննչական բաժին: Ձեռնարկվում են միջոցառումներ՝ գողոնը հայտնաբերելու ուղղությամբ:

ԼՈՒՐԵՐ

ԳՈՐԾԸ ԴԱՏԱՐԱՆՈՒՄ Է

Ժողովուրդ օրաթերթին հայտնի դարձավ,որ Արտավազդ Մարգարյանին մեղադրանք է առաջադրվել:

Նա, հանդիսանալով Արտաշատ համայնքի ավագանու Հայ Հեղափոխական Դաշնակցության ղեկավարը եւ նպատակ ունենալով 2022 թվականի հունիս ամսին Հայաստանի Հանրապետությունում Հայ Հեղափոխական Դաշնակցության կազմակերպված հավաքներին նյութապես շահագրգռելու եղանակով մասնակից դարձնել մի շարք քաղաքացիների, Գառնիկ Մանուկյանի հետ գումարներ են տրամադրել տարբեր անձանց, ինչի արդյունքում խախտվել է քաղաքացիների խաղաղ, առանց զենքի հավաքներին ազատ կամահայտնությամբ մասնակցելու սահմանադրական իրավունքը:

Այս քրեական գործը մտավ դատարան:

ՊԱՇՏՈՆԱՆԿ ԴԱՏԱԽԱԶՆԵՐԸ

Hayastan.news-ը տեղեկություն էր տարածել, թե Աննա Վարդապետյանը երեկ Կոտայքի մարզի դատախազ, Ռոբերտ Քոչարյանի գործով մեղադրող Պետրոս Պետրոսյանին անսպասելի ազատել է Կոտայքի մարզի դատախազի պաշտոնից եւ նշանակել գլխավոր դատախազության վարչություններից մեկի պետի տեղակալ: Դրանից հետո արդեն երեկ դատախազ Պետրոս Պետրոսյանը աշխատանքից ազատվելու դիմում է ներկայացրել: Աշխատանքից ազատման դիմում է ներկայացրել նաեւ Աննա Վարդապետյանի տեղակալ Գեւորգ Բաղդասարյանը:

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ Գեւորգ Բաղդասարյանի՝ աշխատանքից ազատման դիմում ներկայացրելը սպասելի էր, քանի որ Աննա Վարդապետյանի՝ դատախազի պաշտոնը ստանձնելուց հետո նա այն քիչ մարդկանցից էր, որ մնաց իր պաշտոնին: «Ժողովուրդ» օրաթերթը գրել էր, որ միակ տեղակալը, որը դատախազությունը չի լքի, Գեւորգ Բաղդասարյանն է: Բանն այն է, որ նա թեեւ դատախազ Դավթյանի ընկերն է, բայց նաեւ «Մարտի 1-ի» գործով մեղադրող դատախազներից մեկն է եւ ծառայություն է մատուցել քաղաքական իշխանությանը: Պետրոս Պետրոսյանը եւս նախկին դատախազի ընկերներից է: Ստացվում է՝ Արթուր Դավթյանի կադրերից ազատման գործընթացը դեռ չի ավարտվել:

ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

● *Ըստ ոստիկանության տվյալների՝ հունիսի 5-ից 6-ը Հայաստանի Հանրապետությունում բացահայտվել է հանցագործության 70 դեպք, որոնցից 2-ը՝նախկինում կատարված:*

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐՔ

ՆՈՐ ԴԱՏԱԿԱՆ ԳՈՐԾ

Իջեւան խոշորացված համայնքի Ազատամուտ գյուղում գործող բենտոնիտի կոմբինատը խորհրդային տարիներին արդյունաբերական խոշոր ձեռնարկություն էր, որն աշխատանքով ապահովում էր հարյուրավոր մարդկանց: Ազատամուտ բանվորական ավանը ստեղծվել է գործարանի հենքի վրա: Բենտոնիտի կոմբինատի արտադրանքը առաքվում էր ԽՍՀՄ բազում ձեռնարկություններ: Սակայն Ադրբեջանի կողմից տրանսպորտային շրջափակումը, Իջեւան-Ղազախ երկաթգծի չգործելը դժվարություններ է առաջացրել բենտոնիտի կոմբինատի արտադրանքի առաքման վրա: Փոքր հզորությամբ, ընդմիջումներով աշխատող բենտոնիտի կոմբինատն արտադրանքն առաքելիս տրանսպորտային մեծ ծախսեր է կատարում, ինչը գործարանի արտադրանքը արտերկրում՝ հիմնականում Ռուսաստանում, ոչ մրցունակ է դարձնում:

Ադրբեջանի Ղազախի շրջանում է գտնվում Իջեւանի բենտոնիտի կոմբինատի հանքավայր Սարիգյուղի բենտոնիտային կավերի հանքի շարունակությունը: Ադրբեջանցիները Ղազախի շրջանում արդիական սարքավորումներով հագեցած բենտոնիտի վերամշակման գործարան են կառուցել, եւ դրա արտադրանքը Ղազախից երկաթուղով տեղափոխում են Ռուսաստան: Իջեւանի բենտոնիտի կոմբինատը տրանսպորտային դժվարությունների հետ ունի այլ խնդիր, ընկերության մի շարք բաժնետերեր տարիներ շարունակ դատական հայցեր են ներկայացնում կոմբինատի դեմ: Ահա դրանցից մեկը.

Արսեն Միքայելի Հարությունյանը 2022թ. հունվարի 31-ին Տավուշի մարզի առաջին ատյանի դատարան հայցադիմում է ներկայացրել «Իջեւանի բենտոնիտ կոմբինատ» ԲԲԸ ժողովի որոշումներն անվավեր ճանաչելու եւ անվավերության հետեւանքներ կիրառելու մասին պահանջներով: Տավուշի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Աշոտ Ջավախյանի՝ 2022թ. փետրվարի 11-ի որոշմամբ հայցադիմումն ընդունվել է վարույթ: Այդ դատավորի՝ նույն օրվա մեկ այլ որոշմամբ հայցի ապահովման միջոց կիրառելու վերաբերյալ միջնորդությունը մերժվել է: Դատավոր Ա. Ջավախյանը 2022թ. դեկտեմբերի 8-ին ապացուցման պարտականությունը բաշխելու մասին որոշում է կայացրել: ՀՀ բարձրագույն դատական խորհրդի 2022թ. նոյեմբերի 15-ի որոշմամբ՝ Տավուշի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան գործուղված Երեւան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Աշոտ Ջավախյանը, ՀՀ նախագահի՝ 2023թ. փետրվարի 17-ի հրամանագրի համաձայն, նշանակվել է Սնանկության դատարանի դատավոր, որի հիմքով սույն քաղաքացական գործը 2023թ. փետրվարի 22-ին մակագրվել է Տավուշի մարզի առաջին ատյանի դատարանի դատավոր Նանա Դալլաքյանին:

Ն. Դալլաքյանը որոշում է կայացրել նշված քաղաքացիական գործն ընդունել վարույթ, գործի քննությունը սկսել սկզբից եւ 2023թ. ապրիլի 5-ին Տավուշի մարզի առաջին ատյանի դատարանի Դիլիջանի նստավայրում հրավիրել նախնական դատական նիստ: Սույն գործով հաջորդ նախնական դատական նիստը նշանակված է հունիսի 8-ին:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ
Տավուշ

ԲՅՈՒՋԵ

ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ ԹԵՐԱԿԱՏԱՐԵԼ Է

«ԼՈՒՅՍ» հիմնադրամը վերլուծել է 2023թ. առաջին եռամսյակում ՀՀ պետական բյուջեի կատարման հաշվետվությունը:

«Հաշվետվության վերլուծությունը ցույց է տվել, որ 2023թ. առաջին եռամսյակում, ծրագրվածի համեմատ, արձանագրվել է բյուջեի ծախսերի էական թերակատարում՝ 23.5%-ով կամ 130.1 մլրդ դրամով, ընդ որում՝ թերակատարվել են ինչպես ընթացիկ, այնպես էլ կապիտալ ծախսերը համապատասխանաբար 13.4 եւ 69.2 տոկոսով: Առաջին եռամսյակի ճշտված ծրագրի նկատմամբ պետական բյուջեի ծախսերի թերակատարման ընդհանուր գումարի 46.8%-ը բաժին է ընկել ընթացիկ ծախսերին, 53.2%-ը՝ ոչ ֆինանսական ակտիվների հետ գործառնություններին: Այս համատեքստում հարկ է նշել, որ կապիտալ ծախսերը 2023թ. առաջին եռամսյակում, 2022-ի նույն ժամանակահատվածի համեմատ, նվազել են 18.2%-ով եւ կազմել 30.4 մլրդ դրամ: Կապիտալ ծախսերի կատարողականը կազմել է ընդամենը 30.8%: Կատարողականի նման ցածր ցուցանիշը ցույց է տալիս, որ կապիտալ ծրագրերի կառավարումն ու իրականացումը կառավարության համար շարունակում է մնալ չլուծված լուրջ հիմնախնդիր:

Կապիտալ ծախսերի՝ ծրագրից նման մեծ շեղումը եւ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ նվազումը հիմնականում պայմանավորված է ՀՀ պաշտպանության նախարարության շենքային պայմանների բարելավման միջոցառման ծախսերի թերակատարմամբ: Դրանք 2023թ. առաջին եռամսյակում կազմել են 19.5 մլրդ դրամ եւ 67.9%-ով զիջել են ծրագրային ցուցանիշին: Ավելին՝ դրանք 28.9%-ով փոքր են նույնիսկ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի ցուցանիշից:

Բացի այդ, 2023թ. առաջին եռամսյակում կառավարությունը թերակատարել է նաեւ 2023թ. պետական բյուջեով նշված ժամանակահատվածի համար նախատեսված ծրագրերի իրականացումը: Նախատեսված 164 ծրագրերից առաջին եռամսյակում փաստացի միջոցներ են օգտագործվել թվով 154 ծրագրերի գծով, իսկ ծախսերի կատարողականի ընդհանուր շեղումը կազմել է շուրջ 130 մլրդ դրամ: Ընդ որում, ծրագրային դասակարգմամբ բյուջետային ծախսերի կատարողականի ուսումնասիրությունը ցույց է տալիս է, որ, այս առումով եւս «առաջամարտիկը» պաշտպանական համակարգն է. պլանից ամենից ավելի էական շեղում՝ 46.8%-ով կամ 52.6 մլրդ դրամով, արձանագրվել է ՀՀ պաշտպանության նախարարության պատասխանատվության տակ գտնվող ծրագրերի գծով (2023թ. առաջին եռամսյակի ճշտված պլանով նախատեսված 112.3 մլրդ դրամի ծախսերի փոխարեն): Բացի այն, որ արձանագրվել է ՊՆ պատասխանատվության տակ գտնվող ծրագրերի իրականացման խիստ ցածր կատարողական, փաստացի ծախսերը նույնիսկ 12.8%-ով պակաս են նախորդ տարվա նույն ժամանակահատվածի ցուցանիշից: Ի դեպ, 2023 թվականի պետական բյուջեն ներկայացնելիս կառավարությունը բազմիցս շեշտում էր պաշտպանական ծախսերի՝ բյուջեով նախատեսվող աննախադեպ աճը:

Փաստորեն, չնայած ծրագրերի գծով բյուջեով նախատեսվել եւ հատկացվել է գումար, այնուամենայնիվ, դրանք ամբողջությամբ կամ մասնակիորեն չեն իրականացվում, ինչն առաջին հերթին պատկան մարմինների ոչ բավարար արդյունավետ աշխատանքի վկայությունն է: Մասնավորապես, վերջին տարիներին սովորական է դարձել կապիտալ ծախսերի թերակատարումը, ինչը վկայում է ՀՀ կառավարության կողմից պլանավորված ծախսերն ամբողջությամբ եւ սահմանված ժամկետում կատարելու անընդունակության մասին: Այս փաստն առավել մտահոգիչ է հատկապես ՀՀ պաշտպանության նախարարության պատասխանատվության տակ գտնվող ծրագրերի թերակատարման համատեքստում: Մինչդեռ, ներքին պահանջարկի ներկայիս կտրուկ աճի եւ անվտանգային խնդիրների պայմաններում կառավարությունից ակնկալվում է այնպիսի միջոցառումների իրականացում, որոնք միտված են առաջարկի ավելացմանը, իսկ դա, միանշանակ, ենթադրում է մեծածավալ նպատակային կապիտալ ծախսերի կատարում: Ընդ որում, 2023թ. առաջին եռամսյակում կապիտալ ծախսերի նման թերակատարումը վտանգավոր ազդակ է. մասնավորապես, արձանագրված փաստը հիմք է տալիս ենթադրելու, որ դրանք, ամենայն հավանականությամբ, կթերակատարվեն նաեւ տարեկան կտրվածքով: Մինչդեռ, 2023թ. բյուջեի նախագիծը ներկայացնելիս կառավարությունը՝ որպես դրա կարեւոր արժանիք, նշում էր աննախադեպ ծավալի կապիտալ ծախսերի պլանավորումը»:

ՀԱՅԱՍՏԱՆ

ՕՁԵՐՆ ԱԿՏԻՎԱՑԵԼ ԵՆ

Հունիսի 4-5-ը ՆԳՆ ՓԾ ճգնաժամային կառավարման ազգային կենտրոնում 20 ահազանգ է ստացվել հանրապետության տարբեր տարածքներում նկատված օձերի վերաբերյալ, մասնավորապես՝ Երեւան, Սիսիան, Կապան, Աշտարակ քաղաքներում, Սիս, Ջորաղբյուր, Քասախ, Կարբի, Ազատան գյուղերում:

Դեպքի վայր ժամանած փրկարարներն իրականացրել են տեղազննում, որի արդունքում հայտնաբերել են 3 գյուրզա, 2 շահմար, 5 սահնօձ, 3 լորտու տեսակի սողուն եւ տեղափոխել անվտանգ տարածք:

ՆՈՐ ՄԻՋՈՒԿԱՅԻՆ ԷՆԵՐԳԱԲԼՈԿ

ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանի որոշմամբ՝ ՀՀ-ում նոր միջուկային էներգաբլոկ կառուցելու վերաբերյալ հարցերը քննարկելու համար կստեղծվի միջգերատեսչական աշխատանքային խումբ:

«Աշխատանքային խումբը ստեղծվում է նաեւ փոքր մոդուլյար ռեակտորներ տեղակայելու նպատակահարմարության, ինչպես նաեւ անհրաժեշտ տեխնոլոգիաների ընտրության նպատակով վերլուծություններ իրականացնելու եւ հետագա քայլերի հաջորդականությունը սահմանելու վերաբերյալ հարցերի քննարկման նպատակով: Այս որոշմամբ հաստատվում է նաեւ խմբի կազմը»,- ասված է որոշման մեջ:

Միջգերատեսչական աշխատանքային խմբի ղեկավարը 2-ամսյա ժամկետում ՀՀ վարչապետի աշխատակազմ պետք է տեղեկատվություն ներկայացնի կատարված աշխատանքների մասին:

● *Անցած 1 օրվա ընթացքում Հայաստանի Հանրապետությունում արձանագրվել է 6 ճՏՊ. 10 մարդ ստացել է տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:*

ԵՐԱԺՇՏԱՐՎԵՍՏ

ԽՆԿԱՐԿՈՒՄ՝ ՀԻՇԱՏԱԿԻՆ

Մեծանուն կոմպոզիտոր Արամ Խաչատրյանի ծննդյան 120-ամյակի կապակցությամբ Կոմիտասի անվան պանթեոնում ՀՀ ԿԳՄՍ նախարար Ժաննա Անդրեասյանը եւ նախարարի տեղակալ Արա Խզմալյանը մասնակցել են Արամ Խաչատրյանի հիշատակի խնկարկման արարողությանը եւ ծաղիկներ խոնարհել նրա շիրիմին:

Միջոցառմանը մասնակցել են նաեւ Արամ Խաչատրյանի տուն-թանգարանի տնօրեն Արմինե Գրիգորյանը, Հայաստանի կոմպոզիտորների միության նախագահ Արամ Սաթյանը, Հայաստանի պետական սիմֆոնիկ նվագախմբի տնօրեն Սարգիս Բալբաբյանը, Երեւանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի ռեկտոր Սոնա Հովհաննիսյանը, երաժշտարվեստի ներկայացուցիչներ, խաչատրյանական արվեստի երկրպագուներ, դպրոցականներ:

«Արամ Խաչատրյանի արվեստը միշտ այժմեական է՝ անկախ փոփոխվող մարտահրավերներից ու խնդիրներից: Հոբելյանական տարին եւս մեկ առիթ է վերաիմաստավորելու եւ նորովի գնահատելու Արամ Խաչատրյանի թողած հսկայական ժառանգությունը, որտեղ մշտապես անելիք ունենք՝նաեւ նոր շերտեր բացահայտելու առումով»,- ասել է ԿԳՄՍ նախարար Ժաննա Անդրեասյանը:

Նրա խոսքով՝ ՀՀ վարչապետի որոշմամբ՝ ձեւավորվել է Արամ Խաչատրյանի ծննդյան 120-ամյակի հոբելյանական հանձնաժողով, հաստատվել է պետական ծրագիր, որի իրականացման համար բյուջեից հատկացվել է ավելի քան 530 միլիոն դրամ: Միջոցառումները բազմաժանր են եւ ընդգրկում են լայն աշխարհագրություն՝ Վրաստանից մինչեւ ԱՄՆ, Կանադա, Հունաստան, Ֆրանսիա, Գերմանիա: Ժաննա Անդրեասյանը նշել է, որ այսօր կմեկնարկի Արամ Խաչատրյանի անվան միջազգային մրցույթը՝ բացման համերգով:

«Արամ Խաչատրյանի երաժշտությունը կյանքի բոլոր փուլերի համար է եւ տալիս է մտորելու ու հասկանալու հնարավորություն: Կարեւորում եմ այն հանգամանքը, որ մեր երեխաները եւս ներգրավվեն հոբելյանական ծրագրերում՝ նորովի ճանաչելու եւ բացահայտելու Խաչատրյանին»,- եզրափակել է նախարար Ժաննա Անդրեասյանը:

Նախարարի տեղակալ Արա Խզմալյանի խոսքով՝ Արամ Խաչատրյանի հանճարեղ երաժշտարվեստը մեզ իրավունք է տալիս աշխարհի հանճարեղ ժողովուրդների շարքում զգալ որպես լիարժեք անդամ:

ԶԱՐԳԱՑՈՒՄ

ԻՆՏԵՐՆԵՏ ՀԱՍԱՆԵԼԻՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐ ԴԻՐՔԵՐ

Հայաստանում բնակավայրերի 66 տոկոսն ապահովված է լայնաշերտ ինտերնետով, ՀՀ բնակչության 96 տոկոսը հնարավորություն ունի օգտվելու ինտերնետից:

Այս մասին նշեց ՀՀ ԲՏԱ նախարարի տեղակալ Ավետ Պողոսյանը հեռավոր համայնքներում ինտերնետ հասանելիություն ապահովելու հնարավորությունների ստեղծման համար լուծումներ գտնելու նպատակով կազմակերպված՝ «Ապահովելով հասանելիություն բոլորին՝ Եվրոպա եւ տարածաշրջան» խորագրով գագաթնաժողովին:

«Կառավարությունն իր ուշադրության կենտրոնում է պահում բնակավայրերը լայնաշերտ ինտերնետով ապահովելու ծրագիրը, եւ 2021-2026 թվականների ծրագրում առկա է կետ՝ բնակավայրերի մինչեւ 80 տոկոսը մինչեւ 2026 թվականը լայնաշերտ ինտերնետով ապահովելու վերաբերյալ: Այս միջոցառման նպատակը այդ հարցի շուրջ մասնագետներին համախմբելն ու լուծումներ գտնելն է»,- ասաց փոխնախարարը:

Նրա համոզմամբ՝ մինչեւ 2026 թվականը Հայաստանի բնակավայրերի 80 տոկոսը ապահովված կլինի լայնաշերտ ինտերնետով:

«Այս պահին բնակավայրերի 66 տոկոսն արդեն իսկ ապահովված է լայնաշերտ ինտերնետով, միեւնույն ժամանակ ուզում եմ նշել, որ բնակչության 96 տոկոսը հնարավորություն ունի օգտվելու լայնաշերտ ինտերնետից: Մենք խոսում ենք շատ հեռավոր, փոքր բնակչություն ունեցող բնակավայրերի մասին, որտեղ ներդրումներ անելը տնտեսական տեսանկյունից նպատակահարմար չէ: Այս դեպքում լուծումը տեսնում եմ սուբսիդավորման կամ օպերատորներին այդ բնակավայրերում ինտերնետ հասանելիություն ապահովել շահագրգռելու մեջ: Մենք այս պահին ունենք գործիքակազմ. կառավարությունը պատրաստ է սուբսիդավորել այն համայնքներին, որոնք նման հայտ ներկայացնեն: Այս պահի դրությամբ համայնքներից որեւէ մեկը հայտ չի ներկայացրել, ինչը նշանակում է, որ ինտերնետ հասանելիությունը բավական լավ վիճակում է գտնվում»,- նշեց Պողոսյանը:

Նրա համոզմամբ՝ այս պահին ինտերնետ հասանելիության առումով Հայաստանը առաջատար դիրքեր է զբաղեցնում: Նման կարծիք հայտնեց նաեւ Ազգային ժողովի նախագահի տեղակալ Հակոբ Արշակյանը՝ նշելով, որ Հայաստանը ինտերնետ հասանելիության տեսանկյունից բավականին լավ դիրքերում է:

«Պետք է արձանագրել, որ ինտերնետի հասանելիությունը մարդկությանը տվել է նոր տեխնոլոգիաների միջով այլընտրանքային կրթություն ստանալու հնարավորություն: Ինտերնետ հասանելիությունը տարբեր համայնքներում, սահմանամերձ գյուղերում հնարավորություն կստեղծի օգտվել կրթական տարբեր ռեսուրսներից՝ վերապատրաստվել, զարգանալ, լեզուներ սովորել: Այն նաեւ լայն հնարավորություններ է ստեղծել տրանսպորտային եւ լոգիստիկ համակարգի համար»,- նշեց Արշակյանը:

Եզրափակելով՝ Արշակյանն ընդգծեց, որ Հայաստանը, հաշվի առնելով բոլոր հանգամանքները, չափազանց կարեւորում է ինտերնետի հասանելիությունը համայնքներին:

Հայաստանի օպերատորների միության տնօրեն Քրիստինե Գյոնջյանն ասաց՝ ինտերնետ կապն այսօր առաջնահերթությունների շարքում է եւ ստեղծում է հավասար հնարավորություններ համայնքների համաչափ զարգացման համար:

«Չնայած տեխնոլոգիաների գերարագ զարգացմանը՝ այսօր ամբողջ աշխարհում բնակվող 8 միլիարդ մարդուց 2.7 միլիարդը դեռ ինտերնետ հասանելիություն չունի՝ կախված աշխարհագրական դիրքից, ենթակառուցվածքների պակասից եւ բնակչության սակավությունից: Իսկ հասանելիություն ապահովելու համար պահանջվում է նոր, ոչ ավանդական մոտեցումներ: Այս խնդրին լուծում տալու համար կազմակերպությունները ողջ աշխարհից կազմում են դաշինքներ՝ ռեսուրսները համախմբելու, ներդրումները կառավարելու, թվային բացը լրացնելու եւ թվային վերափոխմանը նպաստելու համար: Հայաստանի օպերատորների միությունը եւս իր նպատակների իրագործման ընթացքում կոչված է նպաստելու ինտերնետի ու հեռահաղորդակցության ոլորտների զարգացմանը, օրենսդրական դաշտի բարելավմանը, թվային գրագիտության բարձրացմանը՝ուղղված խնդիրների լուծմանը»,- ասաց Գյոնջյանը:

Նա նշեց՝ իրենց բազմակողմանի գործունեության հիմքում երկրի հավասարաչափ զարգացումն է, ՀՀ ողջ տարածքում որակյալ կապի հասանելիության ապահովմանը նպաստելը եւ համացանցի անվտանգ կիրառությունը:

ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

ՄԵԿՆԱՐԿՈՒՄ ԵՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հանրապետությունում հունիսի 9-ին մեկնարկում են միասնական քննությունները: Այս մասին հայտնում է Գնահատման եւ թեստավորման կենտրոնի փոխտնօրեն Կարո Նասիբյանը:

Նրա խոսքով՝ քննություններին այս փուլում մասնակցելու է 13 հազար 456 դիմորդ:

«Միասնական քննությունների առաջին օրը դիմորդները քննություն են հանձնելու «Քիմիա» եւ «Ռուսաց լեզու» առարկաներից: Այս փուլում քննություններն ավարտելու ենք հունիսի 27-ին «Հայոց պատմություն» եւ «Ֆիզիկա» առարկաներից: Դիմորդները տեղաբաշխվել են հանրապետության 40 միասնական քննական կենտրոններում՝ 14-ը՝ Երեւանում, 26-ը՝ մարզերում»,-ասաց Կարո Նասիբյանը:

Այս փուլում քննություններին մասնակցող դիմորդների թվում կան նաեւ այն անձինք, որոնք հնարավորություն են ունեցել քննություն հանձնել նախորդ փուլում՝ ընթացիկ տարվա հունվարին: Հունվարին քննություն հանձնածներից հունիսի համար չի հայտագրվել միայն 333-ը: Մնացած 4200-ը պատրաստվում է կրկին մասնակցել քննություններին:

«Կար կարծիք, որ եթե դիմորդին բավարարում էր հունվարի ստացած իր գնահատականը, ապա հունիսին չի մասնակցի: Ինչպես տեսնում ենք, մասնակիցների ճնշող մեծամասնությունը ցանկանում է երկրորդ անգամ քննություն հանձնել: Կա դիմորդ, որ հունվարին ստացել է 19,75 միավոր, միեւնույնն է, հայտագրվել է հունիսի քննության համար»,-ասաց Կարո Նասիբյանը:

Այս տարվա պահանջված մասնագիտությունների ցանկում առանձնապես փոփոխություն տեղի չի ունեցել: Հիմնականում պահանջված են տեղեկատվական տեխնոլոգիաներին, կառավարմանը, ֆինանսներին ու բուժական գործին առնչվող մասնագիտությունները:

Քննությունների կազմակերպչական աշխատանքներն ամբողջությամբ ավարտվել են: Կարո Նասիբյանը նշեց, որ վերահսկողական գործիքակազմը, ինչպես նախորդ տարիներին, գործի է դրվելու: Բոլոր նրանք, որոնց մոտ կհայտնաբերվի ցանկացած տիպի էլեկտրոնային սարք, դուրս կհրավիրվեն: Հնարամիտ դիմորդները լինելու են վերահսկողների ուշադրության կենտրոնում:

●«Ժողովուրդ» օրաթերթում եւ Armlur.am կայքում գովազդ, հայտարարություն, հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

ՄԱՆՐԱՄԱՍՆԵՐ

ՎԱՐԿԱԾՆԵՐ՝ ԼՐԱԳՐՈՂԻ ՄԱՀՎԱՆԻՑ

Ինչպես գիտենք, հունիսի 1-ին առեղծվածային ու ողբերգական դեպք էր տեղի ունեցել Երեւանում: Ժամը 12:00-ի սահմաններում ՀՀ ներքին գործերի նախարարության ոստիկանության Մալաթիայի բաժին ահազանգ էր ստացվել, որ Սվաճյան փողոցի շենքերից մեկի 1-ին հարկի տանիքում կնոջ դի կա եւ վիրավոր երեխա: Քիչ անց հայտնի դարձավ, որ ողբերգական դեպքի զոհերը հաղորդավարուհի, բլոգեր Օվսաննա Սողոյանն է եւ նրա 11-ամսական փոքրիկը՝ Ռաֆֆին:

Ահասարսուռ դեպքի առթիվ Օվսաննա Սողոյանի ընկերները, շոկի ենթարկված, սոցիալական ցանցերում գրառումներ են իրականացրել:

Հաղորդավարուհի Հրաչուհի Ութմազյանը, անդրադառնալով ցավալի լուրին, հրապարակում էր արել «Ինստագրամ»-ի «Սթորի» բաժնում եւ լուսանկար հրապարակել:

«Ժողովուրդ» օրաթերթը հաղորդավարուհի Հրաչուհի Ութմազյանից տեղեկացավ, որ Օվսաննայի հուղարկավորությունն արդեն տեղի է ունեցել, եւ նա նշեց, որ չի կարող խոսել, քանի որ շատ ծանր է իր համար:

Իսկ մինչ իրավապահ համակարգը կբացահայտի, թե ինչ է իրականում տեղի ունեցել, մեզ հայտնի դարձավ, որ առեղծվածային դեպքի մասին Օվսաննայի շրջապատում տարբեր վարկածներ են պտտվում: Ըստ շրջանառվող լուրերի՝ երեխայի ծնունդից հետո Օվսաննա Սողոյանը կրոնական կազմակերպությունների միջոցառումների է մասնակցել եւ ունեցել է առողջական որոշակի խնդիրներ:

Ի դեպ, ինչպես տեղեկանում ենք Օվսաննայի ֆեյսբուքյան էջից, նա մայիս ամսվա սկզբին էր վերադարձել Բալիից եւ կիսվել իր տպավորություններով:

Լ. Ե.

ԸՆԴՀԱՏԱԿ

ԱՐԶԱՔԱՆՑՅԱՆԸ ԳՆԵԼ Է «ԲԱՑ TV»-ԻՆ

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկությունների համաձայն՝ գործարար, նախկին պատգամավոր, «Ուժը հայրենյաց» կուսակցության նախագահ Տիգրան Արզաքանցյանը գնել է «Բաց TV»-ի յութուբյան ալիքը:

Նշենք, որ ավելի վաղ «Ժողովուրդ» օրաթերթը գրել էր, որ Տիգրան Արզաքանցյանն ու կինը՝ Նատալյա Ռոտենբերգը, արդեն տեւական ժամանակ է, ինչ ընդհատակ են անցել:

Նատալյա Ռոտենբերգը Երեւանի կենտրոնում՝ Մաշտոցի պողոտայում, իր անունը կրող բրենդային խանութը փակել է, սակայն «Ժողովուրդ» օրաթերթի տեսախցիկը ֆիքսեց, որ «Մարիոթ» հյուրանոցում առկա խանութ-սրահի մասնաճյուղը բաց է իր հաճախորդների համար:

Հիշեցնենք, որ դեռեւս անցած տարի՝ հունիսին, Տիգրան Արզաքացյանի կինը՝ Նատալյա Ռոտենբերգը, հայտարարեց, որ մտադիր է առաջադրվել Երեւանի ավագանու ընտրություններում «Ուժ հայրենյաց» կուսակցությունից:

Արդեն հունիսի 9-ին հայտնի դարձավ, որ Ռոտենբերգի՝ Ուեսթմինսթերում գտնվող, 8,73 մլն ֆունտ ստերլինգ արժողությամբ բնակարանը առգրավվել է այն բանից հետո, երբ նա չի վճարել հիփոթեքը. այս մասին հայտնում էր Daily Mail-ը:

ԼԻԴԱ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

ԼՈՒՐԵՐ

ԽԱՉԱՆՈՎԸ՝ ՏԱՄՆՅԱԿՈՒՄ

2020թ. Օլիմպիական խաղերի փոխչեմպիոն, աշխարհի 11-րդ ռակետ Կարեն Խաչանովը Ֆրանսիայի բաց առաջնության քառորդ եզրափակիչ դուրս գալու շնորհիվ կվերադառնա Պրոֆեսիոնալ թենիսիստների ասոցիացիայի դասակարգման լավագույն տասնյակ, որից դուրս էր մնացել 2019թ. նոյեմբերին:

Պատմության մեջ առաջին անգամ լավագույն տասնյակում կլինի երեք ռուսաստանցի: Դանիիլ Մեդվեդեւն ու Անդրեյ Ռուբլյովը կպահպանեն տեղը առաջատարների թվում:

«Ռոլան Գարոսի» քառորդ եզրափակչում Խաչանովը հունիսի 6-ին կմրցի աշխարհի երրորդ ռակետ, «Մեծ սաղավարտի» մրցաշարերի 22-ակի չեմպիոն, սերբ Նովակ Ջոկովիչի հետ:

ՄԽԻԹԱՐՅԱՆԸ՝ ՉԼ ԵԶՐԱՓԱԿՉՈՒՄ

Հայաստանի ֆուտբոլի ազգային թիմի նախկին ավագ եւ իտալական «Ինտեր»-ի կիսապաշտպան Հենրիխ Մխիթարյանը մեծ ցանկություն ունի մասնակցելու Չեմպիոնների լիգայի եզրափակչին:

«Ամեն ինչ անելու եմ այդ եզրափակիչին մասնակցելու համար: Ցանկություն ունեմ հաղթելու այդ խաղում, քանի որ կարիերաս մոտենում է ավարտին, եւ կուզենայի հաղթել Չեմպիոնների լիգայում»,- ասել է Մխիթարյանը:

Հայ կիսապաշտպանի խոսքով՝ Չեմպիոնների լիգայի եզրափակիչի մրցակից «Մանչեսթեր Սիթի»-ն եվրոպական ակումբների շարքում ունի լավագույն կազմերից մեկը:

«Կարող ենք ցույց տալ, որ, գնդակին տիրապետելով, կարող ենք գրոհել»,-ասել է նա:

ԱՄՈՒՍՆԱՆՈՒՄ Է

Victoria's Secret աշխարհահռչակ բրենդի հայ մոդել Ռուբինա Խանզադյանը պատրաստվում է հարսանիքին:

Մոդելն ինստագրամյան էջում կիսվել է «սթորիներով», որոնցում երեւում է, թե ինչպիսի Bride to be արարողություն են ընկերուհիները կազմակերպել իր համար:

«Սա լավագույն ճանապարհորդությունն էր, որի մասին ես կարող էի երազել»,-գրել է Ռուբինան:

Մոդելն իր էջում, սովորաբար, չի հանրայնացնում անձնականը, բայց նրա ընկերները հաճախ են նրան նշում սիրելիի՝ Գաբրիել Ռոսենի հետ համատեղ լուսանկարներում:

Ռուբինան ծնվել է Երեւանում, սակայն մանկության շրջանում տեղափոխվել է Իսպանիա, որտեղ ապրել է 13 տարի, մինչեւ որ ընտանիքով որոշել են մեկնել Միացյալ Նահանգներ:

● Հունիսի 8-ին Հ. Պարոնյանի անվան երաժշտական կոմեդիայի պետական թատրոնում տեղի կունենա «Բանալի՝երկուսի համար» ներկայացումը: Տոմսերի արժեքը՝1000-3000 դրամ: Սկիզբը՝ժամը 19:00-ին:

ԵՂԵ՛Ք ? ՏԵՂԵԿԱՑՎԱԾ

ԱՊԱՍՏԱՐԱՆ

ՀԱՐՑ. Մեկ անգամ ապաստան ստանալու հայց ներկայացրել եմ, բայց սխալ կա մեջը. կարո՞ղ եմ էլի ներկայացնել:

Նարբե Աբրահամյան (32 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Ապաստանի դիմումի վերջնական (ներառյալ դատական կարգով) մերժումից հետո կարող եք կրկին դիմում ներկայացնել Միգրացիոն ծառայություն՝ Հայաստանում ապաստան ստանալու համար, եթե

- առաջացել են նոր հանգամանքներ, որոնք նախկին դիմումի քննության ժամանակ չեն եղել,
- Դուք ունեք նոր ապացույցներ, որոնք նախկին դիմումի քննարկման ժամանակ չեք կարողացել ներկայացնել:

ՄԱԿ ՓԳՀ Հայաստան

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Նոր դիմումի քննարկման ժամանակահատվածում Դուք ունեք ապաստան հայցող անձանց համար սահմանված նույն իրավունքները եւ պարտականությունները, որոնք ունեիք Ձեր առաջին դիմումի քննարկման ընթացքում:

Էջը՝ ՍՅՈՒՆԻՔ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆԻ

ԻՐԱՎՈՒՆՔ

ՀԱՐՑ. Ո՞վ է հեղինակային իրավունքի տերը. ըստ օրենքի՝ ինչպե՞ս է սահմանվում:

Հրանտ Քոչարյան (24 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Հեղինակ է ճանաչվում այն ֆիզիկական անձը, ում ստեղծագործական, մտավոր աշխատանքի արդյունքում ստեղծվել է ստեղծագործությունը («Հեղինակային իրավունքի եւ հարակից իրավունքների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդված):

Հեղինակը կարող է իր բացառիկ գույքային իրավունքները փոխանցել կամ օգտագործման թույլտվություն տրամադրել այլ անձանց, որոնք հեղինակից ձեռք բերելով այդ իրավունքները՝ դառնում են ստեղծագործության նկատմամբ հեղինակային իրավունքի իրավատեր:

Մտավոր սեփականության գրասենյակ

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Հեղինակային իրավունքով պահպանվող ստեղծագործությունների հեղինակները եւ նրանց ժառանգներն ու իրավահաջորդները (որոնք սովորաբար կոչվում են իրավատերեր) օգտվում են «Հեղինակային իրավունքի մասին» օրենքով տրամադրվող իրավունքներից:

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարը՝ համացանցից

Ավարտվեց Երեւանյան ամենասպասված իրադարձությունը. «Երեւանի գինու օրեր» փառատոնը յուրաքանչյուր տարի քաղաքի սրտում մեկտեղում է լավագույն հայկական գինիներն ու երաժշտությունը, բարձր տրամադրությունն ու համեղ խորտիկները: Այդ օրերին հայկական տասնյակ ընկերությունների պատրաստած գինին փորձելու համար Երեւանի կենտրոնական փողոցներ են գալիս ոչ միայն քաղաքի բնակիչները, այլեւ բազմաթիվ գինեսերներ մարզերից եւ աշխարհի տարբեր երկրներից, սակայն հարսանիք փառատոնի ընթացքում առաջին անգամ է նշվում:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

«Հայմամուլ» ՓԲԸ
հեռ. 45-82-00, 45-19-11

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ 52-5301

Առաքումը՝ **ԱՆՎՃԱՐ**:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԵՂԱՆԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Շիրակ	+ 7 + 12 +20 + 24
Կոտայքի լեռներ	+ 8 + 11 +20 + 23
Կոտայքի նախալեռներ	+17 + 19 +24 + 26
Գեղարքունիք	+ 7 + 13 +18 + 21
Լոռի	+11 + 16 +21 + 26
Տավուշ	+14 + 18 +25 + 29
Արագածոտնի լեռներ	+ 8 + 11 +19 + 22
Արագածոտնի նախալեռներ	+15 + 19 +26 + 30

Արարատ	+18 + 20 +30 + 32
Արմավիր	+17 + 19 +27 + 29
Վայոց ձորի լեռներ	+ 8 + 10 +19 + 22
Վայոց ձորի նախալեռներ	+18 + 20 +25 + 28
Սյունիքի հովիտներ	+18 + 21 +27 + 31
Սյունիքի նախալեռներ	+10 + 15 +21 + 24
Արցախ	+18 + 21 +27 + 31
Երեւան	+17 + 19 +29 + 31

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը եւ ուղարկել նշված հասցեով: Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ _____
Ազգանուն՝ _____
Առաքման հասցե՝ _____
Բջջային եւ/կամ քաղաքային հեռախոս՝ _____

Հեռ.՝(060) 490049
0023, Արշակունյաց 2, 5-րդ հարկ, 518ա.

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝**010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **6.6.2023**
Հասցեն՝ Գերարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ. Հովսեփյան 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, **Գ** նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

«Ժողովուրդ օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. *«Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:*